

«ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ»

«ΕΛΕΥΘΕΡΟΣ ΤΥΠΟΣ» թերթը իր 26 սեպտեմբերի թիւին մէջ, վերոյիշեալ խորագրով յօդուած մը կը հրատարակէ նշելով, որ երբ յոյները հայերու մասին կ'արտայայտուին, կը խօսին այնպէս որ իրենց համար շատ հարագատ բանի մը մասին կը խօսին:

Հայերն ու յոյները նակատագրակից երկու ժողովուրդներ եղած են, որոնք մեր արդի ֆաղափակրթութեան բերած են հսկայ նպաստ մը եւ միաժամանակ իրենց աշխարհագրական դիրքերով նկատուած են բարբարոս ժողովուրդներու դէմ պատուար մը: Մոռնալու չենք, որ հայերը իրենց մեծ օգնութիւնը բերին Բիւզանդիոնին: Յուստինիանոս թագաւորը 17 հայ գորավարներ օգտագործեց իր բանակին համար: Անոնցմէ մէկն է ծանօթ Նարսիսը: 813 թուականին Բիւզանդիոնի գահի պատասխանատուութիւնը յանձնուեցաւ հայազգի Լեւոն 5րդ թագաւորին: Իր մահէն վերջ, նոյնպէս հայ Թէոտորա թագուհին ստանձնեց երկրին գահը: Թէոտորան «սուրբ» որակուեցաւ յոյներու կողմէ մշակոյթի անդաստանէն ներս իր բերած հսկայ նպաստին համար: Յատուկ գուրգուրանք կը տաժէր սրբանկարներու նորոգութեան ու պահպանման գործին մէջ:

Հայ եւ յոյն ժողովուրդներու ողբերգութիւնը ծայր կ'առնէ 1071 թուականէն վերջ երբ սելճուք թուրքերը կը սկսին իրենց բարբարոս արշաւանքներուն: Հայերը փախուստ կու տան իրենց բնակած վայրերէն եւ առժամեայ ապաստան կը գտնեն Փոքր Ասիոյ զանազան շրջաններուն մէջ: 1453ին տեղի կ'ունենայ Պոլսոյ անկումը: Հայերը միշտ յոյն ժողովուրդը կը յամարէ եղբայրակից ժողովուրդ որ պատմութեան բոլոր հանգրուաններուն մէջ աշխատեցաւ թրքական լուծը թօթափելու համար:

Նոյն թերթի, նոյն թիւին մէջ «Հայերու վրէժխնդրութիւնը» խորագրով թերթը կովկասի մասին երկու ամբողջ էջ կը տրամադրէ այժմէական լրատուութեան բաժիններով եւ լուսանկարներով: Խորագրի կողքին, մեծ գիրերով, 13 տողերու մէջ կը նշուի հետեւեալը «*Քաղաքական դէտեր չեն կրնար հաւատալ որ Լեռնային Ղարաբաղի 20.000 մարտիկները յաջողած են իրենցմէ քսանապատիկ անգամ աւելի մեծ բանակ մը փճացնել. բանակ մը՝ որ սաւառնակներ ալ կը տրամադրէ*»:



«Պրումթեւսի վերադարձը»

«ANTI» պարբերաթերթը իր 24 սեպտեմբերի թիւին մէջ, վերոյիշեալ խորագրով եւ ֆարտէսի մը հրատարակումով կը խօսի կովկասի այսօրուան խնդիրներուն մասին: Նախաբան բացատրողականի մը մէջ թերթը կը գրէ.-

«*Կովկասը շատ ծանօթ եւ գեղեցիկ լեռ մըն է, ուր Պրումթեւսի ողբերգութենէն վերջ ամէն մարդ կը կարծէր թէ խնդիրները լուծուած են եւ դասաւորուած: Ի՞նչ գէշ բան է երբ առժիւ մը քու իսկ միտք կը յօշոտէ: Մեր դարու վերջաւորութեան - դար մը որ կը բնորոշուի իր մեծ հերքումներով- վերջապէս կրցանք տեսնել այն գէշ բանը որ կը շարունակէ գոյու թիւն ունենալ այսօր ալ, այսինքն երբ մարդ՝ իր իսկ միտք կը բզկտէ*»:

Յօդուածին մէջ թղթակից Արիդորիս Թրակարինաս կը խօսի կովկասի մէջ ապրող ժողովուրդներու մասին: Կը նշէ անոնց տարբերութիւնները, լիբանանեան չափանիշներով կրօնական մոլեռանդութիւնը, ֆաղափացիական կոիւնները եւ հորհրդային Միութեան ֆայֆայումէն վերջ այդ ժողովուրդներու ներկայ նակատագիրը:



«Նոր Դեր Մը Գտնելու Դժուարութիւնը»

«KAΘΗΜΕΡΙΝΗ» թերթը իր 26 սեպտեմբերի թիւին մէջ, վերոյիշեալ խորագրով եւ Ե. Քափոփուլոս ստորագրութեամբ կը վերլուծէ Թուրքիոյ ներկայ ֆաղափականութեան նոր ինֆնութիւն որոնելու նիգը եւ անոր դիմաց մեծ ուժերու դիմագրաւումը: Յօդուածին մէջ կը վերլուծուի Թուրքիոյ ֆաղափականութիւնը Էօզալէն սկսեալ մինչեւ Զիլլէր, Ատրպէյնանի եւ Հայաստանի ուղղութիւններով: Կը խօսուի Անգարայի կողմէ Պաֆուի ընձեռած զինուորական օժանդակութեան մասին: